ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ԵՂՎԱՐԴԻ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱԽՃԱՍԱԼԵՐԸ

1969 թ. ՀՍՍՀ պետշինի հուշարձանների վերականգնման հատուկ գիտա-արտադրական արվեստանոցը վերականգնման աշխատանքներ էր կատարում Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղի Աստվածածին կրկնահարկ եկեղեցում[1]։ Այդ տաճարի խարխլած գմբեթն ամրացնելու համար անհրաժեշտ էր իջեցնել սյունազարդ գմբեթի քարերը և նորից վերաշարել։ Իջեցման աշխատանքների ժամանակ, նախօրոք հանվեցին վեղարի տակ, թմբուկի վերին շարքի քարերի մեջ տեղադրված հախճասալերը, որոնք ժամանակի ընթացքում քայքայվել էին, իսկ մի մասը՝ կրապատվել։ Ներկայումս դրանք ամրացվելուց և մաքրվելուց հետո պահվում են արվեստանոցի որմնանկարների վերականգնման աշխատանոցում։

Եղվարդի հախճասալերը մինչև այժմ գրեթե ծանոթ չեն եղել ուսումնասիրողներին։ Դա բացատրվում է սալերի դժվարամատչելի տեղում գտնվելու հանգամանքով (մոտ 20—25 մ բարձրության վրա)։

Գ. Հովսեփյանը, Աղիզբեկենց տոհմին նվիրված իր աշխատության մեջ[2], շատ թռուցիկ անդրադարձել է հախճասալերին և ընդհանուր գծերով տվել նրանց բնութագիրը։

Աստվածածին եկեղեցու այդ գոտու վրա եղել են տարբեր տեսակի 52 հախճասալ (քառակուսի, աստղաձև և բազմանիստ)։ Ներկայումս մնացել են ընդամենը 7 հատ ամբողջական և մեկ հատ կոտրված քառակուսի սալիկ, մեկ հատ էլ բազմանիստ։ Վերջերս տեղեկացանք, որ երկու հախճասալ (քառակուսի և աստղաձև) Հայաստանի պատմության պետական թանգարան է հանձնվել Եղվարդ գյուղի բնակիչների կողմից (ՊՊԹ 2381)։ Այսպիսով 52 հախճասալերից պահպանվել է ընդամենը 11 հատ (թերի և ամբողջական)։

Հախճասալերը հանելու ժամանակ նկատվեց, որ գոտին կազմված է եղել 4-ական սալիկներով՝ 13 անգամ կրկնվող հատվածներից, որոնցից իններում սալիկներն ունեցել են հետևյալ դասավորությունը՝ քառակուսի, բազմանիստ, քառակուսի, աստղաձև, իսկ հաջորդ չորսում՝ քառակուսի, աստղաձև, քառակուսի, բազմանիստ (նկ. 1)։ Սալերը հանելու ժամանակ արևելյան կողմում պայմանականորեն ընտրվեց մի հատված և համարակալվեց։ Ստացվեց պահպանված սալերի հետևյալ պատկերը։

Տեղում էին.

1-ին հատվածի 1-ին սալը,
2-րդ հատվածի 3-րդ սալի բեկորը,
5-րդ հատվածի 3-րդ սալը,
11-րդ հատվածի 3-րդ սալը,
12-րդ հատվածի 1-ին, 3-րդ և 4-րդ սալերը,
13-րդ հատվածի 1-ին (մանր փշրանքներ) և 3-րդ սալերը։

Ըստ ձևի, բովանդակության, գեղարվեստական առանձնահատկությունների, հախճասալերը բաժանվում են 3 խմբի։

Առաջին խմբի մեջ են մտնում գրեթե քառակուսի սալերը 29,0—29,5 սմ երկարությամբ, 29,0—30,0 սմ լայնությամբ և 1,5—2,0 սմ հաստությամբ (նկ. 2, վերին չորսը)։

Սալերը ճոխ հարդարված են բուսական, կենդանական և երկրաչափական զարդերով։ Ընդորում, զարդերի տեղադրությամբ և չափերի համամասնությամբ նրանք կրկնվում են։ Վերին մասով անցնում է 8,0 սմ լայնությամբ մի գոտի՝ ոճավորված արմավենազարդով։ Մնացած արտաքին մակերեսը սրածայր, 5,0 սմ լայնությամբ խորանանման գոտիով բաժանված է 3 հատվածի։ Ստորին մասում նույնպես պատկերված է ճյուղերով և տերևներով խիստ ոճավորված արմավենազարդը։ Գոտու աջ և ձախ մասերում պատկերված են ծառի ճյուղեր, որտեղ

---

1 Եկեղեցին կառուցվել է XIV դ. սկզբում։ Ուսումնասիրողների մի մասն այն թվագրում է 1321 թ., հենվելով դռան վերնասալի ծաղկագիր թվականի՝ Հ. Շահխաթունյանի կատարած սխալ վերծանության վրա (տե՛ս նրա «Ստորագրութիւն կաթուղիկեի և հինգ գաւառացն Արարատայ», հատ. Բ, էջմիածին, 1842, էջ 126)։ Գ. Հովսեփյանը իրավացի կերպով եկեղեցին թվագրում է ՉԾ (1301) թվականով (տե՛ս Ակիզբեկենք և նրանց շինարարական գործը, «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, 1921—1922, Վաղարշապատ, էջ 182)։

2 Գ. Հովսեփյան, Ակիզբեկենք և նրանց շինարարական գործը, էջ 186։

տերևներին փոխարինում են կենդանիների գլուխներ։ Ձախ մասում՝ նապաստակ, երկու ընձաղյուծ, գայլ, քարայծ, ավանակ և օձ, աջ մասում՝ երկու նապաստակ, օձ, եղջերու, երկու ընձաղյուծ, քարայծ։ Միայն մեկ հախճասալի վրա օձի փոխարեն պատկերված է կարապ։

Խորանանման գոտու մեջ գետեղված են պարսկերեն արձանագրություններ[3], որոնք հատված են Ֆիրդուսու «Շահ-Նամեից»։ Սալերի ստորին մասով անցնում է փոքրիկ մի գոտի, որն ունի XIII դարին բնորոշ պարսկական գծազարդումներ։



Նկ. 1

Այս խմբի հախճասալերի ընդհանուր ֆոնը կա՛մ մուգ դարչնագույն է, կա՛մ դեղնավուն։ Բոլոր զարդերը (կենդանական, բուսական և երկրաչափական), ինչպես նաև արձանագրությունները փիրուզագույն են՝ շքաղյուսների պատրաստման մի եղանակ, որն ընդունված էր Պարսկաստանում XIII—XIV դդ. սահմանագլխին[4]։

Այստեղ բնորոշն այն է, որ ուռուցիկ հիմքի վրա նկարված կենդանական ու բուսական պատկերների արձանագրությունների ոճը մոտ է պարսկական մանրանկարչության ոճին։

Արձանագրությունները, գոտիների եզրերը գունազարդված են կոբալտով (կապտավուն գույնի)։ Կապտագույն առանձին ցայտեր նկատվում են նկարի որոշ մասերում։ Հախճասալերի ջնարակման մեջ բաց գույների (սպիտակ) համար լայն չափով կիրառվել է կապարը։ Մյուս գույների բացակայությունը բացատրվում է, հավանարար, ենթաջնարակային նկարազարդման համար դրանց վատ դիմացկունությամբ։

Վերոհիշյալ սալերը կարելի է վերադրել պարսկական շողյուն խեցեղենի դասական օրինակներին։ Ինչպես բոլոր այլ նմուշներում, այնպես էլ այստեղ կենդանիների պատկերումը ունի իր էպիկական հիմքերը և կապված է պարսկական դիցաբանության այս կամ այն երևույթի հետ։ Բոլոր հախճասալերը ետևի կողմից սև ներկով համարակալված են (նկ. 3)։ Որոշ տեղերում կան ջնջումներ և ուղղումներ։ Պետք է ասել, որ սալերի համարակալումը, ինչպես կտեսնենք ստորև, չի համապատասխանում եկեղեցու վրա նրանց ունեցած դասավորությանը։

Նշված զարդամոտիվներով քառակուսի հախճասալերը, ինչպես ասացինք, թվագրվում են XIII դարով, գուցե և XIV դարի սկզբով։ Այս թվագրության օգտին են խոսում Լուվրի թանգարանում պահվող խաչաձև և աստղաձև հախճասալերը, որոնց վրա նույն ոճով պատկերված են եղնիկներ, ընձաղյուծներ, նապաստակներ, թռչուններ և որոնք պատրաստման տարեթվերի վերաբերյալ ստույգ տվյալներ ունեն[5]։

Հախճասալերի զարդամոտիվները սերտորեն առնչվում են նույն դարաշրջանի խեցեղենի զարդամոտիվների հետ։ Փայտակարանի (Օրեն-կալայի) XIII դարով թվագրվող մի թասի և Թեհրանի թանգարանում պահվող մի սկուտեղի եզրին պատկերված ընձաղյուծը կատարման ոճով հար և նման է Եղվարդի սալերի վրա պատկերված ընձաղյուծներին[7]։ Ժնևի թանգարանում պահվող հախճապակյա կճուճի վրա կան մեր սալերի վրա պատկերված գրեթե բոլոր կենդանիները[8]։

Եղվարդի հախճասալերին խիստ նման մեկ օրինակ պահվում է Բրիտանական թանգարանի Գոդմանի ժողովածուում և թվագրվում է XIII դարով[9]։ Լ. Գյուզալյանը, որը վերծանել է հախճասալի վրայի արձանագրությունը (նույնպես հատված «Շահ-Նամեից»), չի բացառում այն հանգամանքը, որ այն կարող է թվագրվել ավելի վաղ ժամանակով[10]։

---

[3] Հախճասալերի արձանագրությունները վերծանել է իրանագետ Լևոն Գյուզալյանը։

[4] И. А. Орбели, Мусульманские изразцы, «Избранные труды», Ереван, 1963, 267։

[5] Տե՛ս И. А. Орбели, Бахрам Гур, «Избранные труды», էջ 550։

[6] M. Bahrami, La reconstruction des carreaux de Damghane d'après leurs inscriptions, III международный конгресс по иранскому искусству и археологии, М.—Л. 1939, աղ. XV։

[7] Sept mille ans d'Art en Iran, Paris, 1962, Նկ. 1033։

[8] A. U. Pope. Suggestions towards the identification of Medieval Iranian faience, III межд. конгресс... էջ 166, աղ. LXXII։

[9] H. Wallis, Persian ceramic art. London, 1894. էջ XXVI, Նկ. 11։

[10] Л. Т. Гюзальян, Фризовые изразцы XIII в. с поэтическими фрагментами, «Эпиграфика Востока», 1949, № 3.



64. 2

Երեքում խումբը ներկայացված է միայն մեկ հախճասալով (նկ. 2, ստորին ձախը, երկարությունը՝ 35,5 սմ, լայնությունը՝ 27,5 սմ, հաստությունը՝ 2,0 սմ)։ Ստորին մասում սալը կոտրված է և անհնարին է խոսել ստորին գոտու մասին։ Վերին գոտին կազմված է նույն ուռուցիկ, ոճավորված արմավենազարդից, ինչ որ կար նախորդ սալերի վրա։ Այս հանգամանքը վերջապես ապացուցում է, որ հախճասալերը պատրաստվել են միևնույն տեղում և նույն դպրոցի արդասիքն են։ Հախճասալի մնացած ողջ մակերեսը հարթ է, ունի մուգ դարչնագույն ոսկիփայլ ֆոն, որը նկարազարդված է բուսական ճոխ զարդերով (շիվեր, տերևներ, ծաղիկներ)։ Այս ընդհանուր ֆոնի վրա պատկերված են մի նապաստակ և երկու աղվես (մեկի տեղը ջարդված է)։ Բոլոր զարդերը սպիտակավուն են, տեղ-տեղ կապտավուն ցայտքերով։ Գոտուց ներքև, ողջ մակերեսով անցնում է ուռուցիկ արձանագրություն (հորիզոնական գծով), որը գունազարդված է կորալտով։ Այս հախճասալի ետևի կողմում նույնպես սև գույնով արված արձանագրություն կա։

2. Օրբելին այս եղանակով պատրաստված հախճասալերը թվագրում է XIV դարի սկզբով[11]։ Նյու-Յորքի Թանգարանի Իրանի բաժնում ցուցադրված է նույնատիպ մի հախճասալ, որի վրա կա թվականը՝ XIII դար[12]։ Ուսումնասիրողների մեկ այլ խումբ ավելի է կոնկրետացնում, դրանք վերագրելով XIII դարի II քառորդին[13]։

Երրորդ խումբը ևս ներկայացված է ընդամենը մեկ հախճասալով, որն ունի ութանկյուն աստղի ձև (նկ. 2, ստորին աջը)։ Սալի գույների համակարգը բաց և մուգ կորալտն է, միախառնված ոսկեգույն շողյունի հետ։ Սալիկի կենտրոնում պատկերված է ձկներով լճակ։ Մայր գետնից բարձրանում է ոճավորված մի ծառ, որն ունի լայն տերևներ և ավարտուն պսակներով կազմված ծաղիկներ, որոնք ամբողջությամբ վերցված են կորալտի ուրվագծերի մեջ։ Ծառի երկու կողմերում պատկերված են ծաղիկներով շրջապատված երկու սոխակ։ Հախճասալի թևերի եզրերին, սպիտակ անագագույն ֆոնի վրա սև տառերով գրված է պարսկերեն արձանագրություն։

Ի տարբերություն նախորդ հախճասալերի, աստղաձև սալիկի արտաքին մակերեսը լրիվ հարթ է։ Նման հախճասալերը լայն տարածում ունեին Պարսկաստանում XII—XIII դդ.։ Պետք է ասել, որ նրանց մեծ մասը իրենց վրա կրում է թվակիր արձանագրություններ։ Այս սալիկը, հավանաբար, պատկանել է Քաշանյան խեցեգործների Դամղանյան դպրոցին[14], որին խիստ բնորոշ է ձկներով արհեստական լճակների պատկերումը բուսական զարդերով միահյուսված։ Նույնատիպ հախճասալեր պահպանվել են Խանեկի Փիր-Հուսեյնի դամբարանի վրա, որոնք ստույգ թվականներ ունեն[15]։



Նկ. 3

Չորրորդ խմբի բազմանիստ հախճասալերը, որից միայն մեկ օրինակ է պահպանվել (գտնվում է Եղվարդում), միագույն են (կապտականաչավուն) և զուրկ նախշազարդումից։

Հախճասալերի օգտագործումը ճարտարապետական կոթողների վրա հայ իրականության մեջ եզակի երևույթ չէ։ Մեզ հայտնի է, որ Դվինի, Անիի և Գառնիի մասնավորապես աշխարհիկ շինություններում հախճասալերը կիրառվել են զուտ դեկորատիվ նշանակությամբ։ Տուֆի և հախճապակու համադրում է նկատվում Դվինի սենյակներից մեկի խորանի վրա։ Ընդհանրապես հախճասալերի օգտագործումը որպես հարդարանքի միջոց նկատվում է հայկական մի շարք հուշարձաններում։ Օրինակ, Եղեգնաձորի շրջանի Սպիտակավոր եկեղեցու (XIV դ. սկիզբ) թմբուկի վրա, վերևից երկրորդ շարքի քարերի մեջ փորագրված և դրված են եղել ութթևանի աստղաձև հախճասալեր (թվով 10 հատ), որոնք

---

[11] Н. А. Орбели, Мусульманские изразцы, էջ 267.

[12] Sept mille ans d'Art en Iran, նկ 095։

[13] A. U. Pope. A survey of persian art, vol. V, London and New-York, 1939, աղ. 725 A։

[14] A. U. Pope, Suggestions towards the identification of Medieval Iranian faience, աղ. LXX, LXXVIII։

[15] В. А. Крачковская, Изразцы мавзолея Пир Хусейна, Тбилиси, 1946, աղ. XXIV։

Ներկայումս չեն պահպանվել։ Սալերի օգտագործման փայլուն օրինակ է Հանդիսանում Իջևանի շրջանի Կիրանց վանքի (XIV դ.) մեծ եկեղեցու Իմբուկի հարդարանքը։ Այստեղ լուսամուտների շրջապատը վերցված է հախճապակի կապտավուն սալերից կազմված խճանկարի մեջ, իսկ Իմբուկի ստորին և վերին մասերը գոտկված են բառակուսի միագույն սալերով։

Եղվարդի հախճասալերի թվագրումը XIII—XIV դդ. ոչ մի կասկած չի հարուցում։ Կարևոր է որոշել այն հարցը, թե երբ են սալերը դրվել եկեղեցու վրա։ Տեղում կատարված մանրակրկիտ զննությունը ցույց տվեց, որ սալերը դմբեթի բարերի մեջ ագուցվել են ոչ թե տաճարի շինության ժամանակ՝ 1301 թ., այլ հետագայում։ Նախ, սալիկները հագցնելու համար արված փորվածքները կատարված են խիստ անփույթ։ Ամրացնող նյութը, շաղախը, տարբերվում է բուն եկեղեցու շաղախից և շատ ցածր է իր որակով։ Սալերի տակ պահպանվել են նախորդ շաղախի հետքերը, որը շատ ամուր է։ Եվ, ամենակարևոր հանգամանքը, սալերի ետևի համարակալումները չեն համապատասխանում եկեղեցու վրա ունեցած դիրքին։ Օրինակ՝ 44—47 համարներում բացակայում է 45 համարը։ Ըստ երևույթին, այդ սալիկները դրված են եղել ինչ-որ մի ուրիշ շինության վրա խիստ համարակալումով։

Արդ, ե՞րբ կարող էին սալերը ուրիշ տեղից բերվել և ագուցվել եկեղեցու քարերի մեջ։ Շատ հավանական է, որ դա կատարվել է XVIII դարում, եկեղեցու վերանորոգման ժամանակ։ Եկեղեցու հարավային պատի (1-ին հարկ) վրա պահպանվել է մի արձանագրություն, հետևյալ բովանդակությամբ. ԵՍ ՄՈՎՍԵՍԻ ՈՐԴԻ ԳՐԻԳՈՐՆ (ՍԱՐԳԻՍՆ) ԹՎ.ՌՃՂԴ (1745) ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑ։

Եղվարդի հախճասալերը կարևոր են ներմուծված պարսկական խեցեղենի ուսումնասիրության համար։

Ս. ԺԱՄԿՈՉՅԱՆ, Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆ ԿԻՐՈՎԱԿԱՆԻ «ԴԻՄԱՑ» ԹԱՂԱՄԱՍՈՒՄ

«Դիմաց» թաղը գտնվում է Կիրովական քաղաքի արևելյան մասում, Տանձուտ գետի աջ ափին։ Այն տափարակ, անկանոն ձևի, դեպի քաղաքը թույլ թեքությամբ մի բարձունք է։ Այստեղ 1966 թ. Հայէլեկտրալույսի Կիրովականի մասնաճյուղի շինարարական աշխատանքների ժամանակ բացվեցին մի շարք ուշ բրոնզեդարյան դամբարաններ։

Հայտնաբերված նյութերով հատկապես ուշագրավ է № 1 դամբարանը, որի ուսումնասիրությանն է նվիրված ներկա հոդվածը։

Դամբարանը քառանկյունաձև էր, ծածկված երկու բաղալտե սալաքարերով։ Նրա երեք կողմերը կազմում էին մեկական ամբողջական սալեր, իսկ արևելյան կողմը, որը հավանաբար որպես մուտք է ծառայել, շարված էր միջին մեծություն ունեցող չորս քարերով։ Դամբարանն ուղղված էր արևելքից արևմուտք, երկարությունը՝ 1,2 մ, լայնությունը՝ 0,7 մ, խորությունը՝ 0,7 մ։ Պեղման ընթացքում հայտնաբերվեցին մեծ քանակությամբ խեցեղեն և մետաղե իրեր։ Ննջեցյալի ոսկորները չափազանց վատ էին պահպանված և հնարավոր չեղավ որոշել նրա դիրքը դամբարանում։ Մարդու ոսկորների հետ գտնվեցին նաև ձիու ստորին ծնոտ և խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորներ։

Դամբարանում հայտնաբերվեցին բրոնզի դաշույններ, գուրզ, կոճակ, ապարանջան, օրսիդաքարե նետասլաքներ, տարբեր տեսակի ուլունքներ և խեցեղեն։

Հայտնաբերված դաշույններից մեկը մեծ է (Կիրովականի երկրագիտական թանգարան[1], № 441/30)։ Ունի երկարավուն, եռանկյունաձև, սուր ծայրով ավարտվող շեղբ, որի մեջքը շեշտված է ցցուն, տափակ երակով (նկ. 1, աջից)։ Շեղբի հիմքում կա բրոնզե պահունակ, դամբի համար բացված երկշարք կլոր անցքերով։ Դաշույնի փայտե կոթը մտնում էր շեղբի հետ միաձույլ լեզվակի մեջ, որը ծայրին անցք ուներ, փայտե կոթի հետ գամով ամրացվելու համար։ Դաշույնի շեղբի երկարությունը 15,5 սմ է, լայնությունը հիմքի մոտ՝ 4 սմ, լեզվակի երկարությունը՝ 3 սմ, լայնությունը՝ 1,5 սմ։ Այն ձուլվել է և ապա ամրություն տալու նպատակով ենթարկվել սառը կռման, որի հետքերն ակնառու են։ Դաշույնի հետ հայտնաբերվել է նաև նրա կոնաձև ցանցկեն գլխիկը (նկ. 1, աջից վերևում), որի անցքերն ընդլայնված են փայտով։

Գոտեկապ, շարժական ցանցկեն գլխիկով դաշույնները գիտական գրականության մեջ հայտնի են որպես սևան-զարգարաղյան տիպ։ Դրանք լայն տարածում են ստացել հատկապես մ. թ. ա. X—IX դդ., հարատևելով մինչև վաղ ուրարտական շրջանը։ Կիրովականի «Դիմաց»

[1] Այսուհետև՝ ԿԵԹ։